ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1965 Общественные науки

Շ. Ռ. Օհանջանյան

1905 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ԱՐՁԱԳԱՆՔԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՍՈՎՈՐՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Եթե առաջին ռուսական հեղափոխության ազդանշանը դարձավ Բաքվի հերոսական պրոլետարիատի դեկտեմբերյան գործադուլը, ապա 1905 թ. հունվարի 9-ի արյունոտ կիրակին հանդիսացավ այդ հեղափոխության սկիզբը։

Ցարական կառավարությունը մտադիր էր արյունով խեղդել երկրում վերելք ապրող հեղափոխական շարժումները։ Սակայն նրա հաշիվները սխալ դուրս եկան։ Շուտով ցարի արյունոտ ոճրագործության լուրը տարածվեց ամենուրեք։ Վրդովմունքը և զայրույթը համակեց ամբողջ երկիրը։ «Բանվոր դասակարգը,— այդ առթիվ գրել է Վ. Ի. Լենինը, — քաղաքացիական պատերազմից մեծ դաս ստացավ, պրոլետարիատի ռևոլյուցիոն դաստիարակությունը մեկ օրում այնպես առաջ գնաց, ինչպես այն չէր կարող գնալ գորշ, առօրյա, խղճուկ կյանքի ամիսների ու տարիների ընթացքում»[1]։

Արդեն հունվարի 9-ի երեկոյան Պետերբուրգի բանվորական շրջաններում սկսվեց բարիկադների կառուցումը։ Հունվարի 10-ին ընդհանուր բողոքի գործադուլ սկսվեց Մոսկվայում։ Ամբողջ երկիրը բռնկվեց բողոքի, գործադուլների և ցույցերի բոցով։ Բանվոր դասակարգի պայքարը ցարիզմի դեմ ընդունեց սուր քաղաքական բնույթ։ Բանվորները մասսայաբար տնտեսական և համերաշխության գործադուլներից անցնում էին քաղաքական գործադուլների և ցույցերի, որոնք վեր էին ածվում զինված ընդհարումների ցարական զորքի ու ոստիկանության դեմ։

Հունվարի 13-ին Ռիգայի պրոլետարիատի քաղաքական բողոքի ցույցը վերջացավ ոստիկանության հետ ունեցած զինված ընդհարումով, որի ժամանակ սպանվեց 70 և վիրավորվեց մոտ 200 մարդ։

Ռուսաստանում չկար մի քաղաք, որտեղ բանվորները, սովորող երիտասարդությունը գործադուլ չաններին՝ իբրև բողոքի նշան ընդդեմ ցարի ոճրագործության, և քաղաքական պահանջներ չառաջադրեին։ Բանվորները մասսայական կերպով փողոց էին դուրս գալիս՝ «Կորչի ինքնակալությունը» լոզունգով։ Հունվարի 9-ից հետո Ռուսաստանում բուռն թափով ծավալվող հեղափոխական իրադարձությունները հուժկու ազդակ հանդիսացան Անդրկովկասի քաղաքական մարտերում կոփված պրոլետարիատի հերոսական պայքարի համար։ Այդ պայքարի տարեգրության մեջ ՌՍԴԲՊ կովկասյան միութենական կոմիտեի ղեկավարությամբ փառավոր էջեր գրեց նաև Անդրկովկասի ուսումնական հաստատությունների սովորող երիտասարդությունը։ Հունվարի 18-ին Անդրկովկասում առաջինը բողոքի գործադուլի դուրս եկան Թիֆլիսի եր-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 8, Երևան, 1950, էջ 106։

կաթուղային գլխավոր արհեստանոցի բանվորները[2], որոնք ցուցադրեցին կազմակերպված դասակարգային պայքար մղելու մեծագույն կորով։ Այդ գործադուլը շուտով ընդգրկեց Անդրկովկասի բոլոր արդյունաբերական քաղաքները, ֆաբրիկաներն ու գործարանները։ Հունվարի 20-ից դադարեցվեց Թիֆլիսի տրանսպորտային երթևեկությունը։ Հունվարի 19-ին Դիդուբեի թաղամասի Բաթումի հրապարակում տեղի ունեցավ 2000 գործադուլավոր բանվորների միտինգ, որը ցրվեց ոստիկանների և կազակների կողմից։ Բանվորական այդ գործադուլին և միտինգին ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս նաև Թիֆլիսի ուսումնական հաստատություններում սովորող երիտասարդությունը։ «Մեզ հասած տվյալներով, — գրում է ոստիկանության ոստմիստրը, — Դիդուբեում ապրում է մի ուսանող, որն ամեն կերպ քաջալերում է արհեստանոցի բանվորներին և գիմնազիայի սովորողներին՝ գործադուլի դուրս գալու համար։ Ներկայումս նրա մոտ են գնում 10—15 բանվորներ և առաջադրանքներ ստանում իրենց հետագա գործունեության համար»[3]։

Անդրկովկասում մեծ թափ ստացած հեղափոխական շարժումներն անմիջականորեն ղեկավարում էին տեղի բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք կոչ էին անում բանվորներին և սովորող երիտասարդությանը մասսայական ակտիվ պայքարի դուրս գալու ընդդեմ ցարական կառավարության հակաժողովրդական քաղաքականության։

Հունվարի 23-ին բոլշևիկների կոչով հեղափոխական ցույցի դուրս եկան Թիֆլիսի բանվորները, որոնց միացան քաղաքային ուսումնարանի, երկրորդ արական գիմնազիայի և ուսուցչական ինստիտուտի սովորող երիտասարդները։ Նրանք երգում էին հեղափոխական երգեր, ցրում հակապետական թռուցիկներ։ Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրությամբ ցուցարարների վրա հարձակվեցին կազակներն ու ոստիկանները, որոնք Գոլովինսկի (այժմ Ռուսթավելու) պողոտայում սկսեցին հաշվեհարդար տեսնել բանվորների և սովորողների հետ։ Եղան սպանվածներ և վիրավորներ, իսկ 40-ից ավելի ցուցարարներ ձերբակալվեցին ու բանտ նետվեցին[4]։

Թիֆլիսի աշակերտական կոմիտեն բանվորների համաքաղաքային ցույցի օրերին բոլշևիկների ցուցումով կազմակերպում է սովորող երիտասարդության մասսայական բողոքներ, դասադուլներ և քաղաքական պահանջներով ելույթներ։ Աշակերտական կոմիտեն նախատեսել էր, որ հունվարի 23-ի ցույցի ժամանակ քաղաքի առաջին արական գիմնազիայի աշակերտները կարմիր դրոշներով պետք է միանան ցուցարար բանվորներին, բայց գիմնազիայի դիրեկցիան ոստիկանական գործակալության միջոցով իմանալով այդ մասին, փակեց ելքի դարպասները և արգելեց աշակերտներին մասնակցելու Գոլովինսկու պողոտայի ցույցին։ Վրդովված աշակերտները հունվարի 25-ին գիմնազիայի աշակերտական խմբակի ցուցումով դադարեցրին դասերը և դուրս եկան գիմնազիայի բակը։ Մանկավարժները չկարողացան հանգստացնել ըմբոստացած աշակերտներին։ Դեպքի վայրը եկած Կովկասի ուսումնական օկրուգի հոգա-

2 Անդրկովկասի պրոլետարիատի խոշորագույն կենտրոն Բաքվում հունվարի 9-ի իրադարձությունների դեմ բողոքի գործադուլները համեմատաբար ուշ սկսվեցին, որովհետև մի քանի օր առաջ էր վերջացել բանվոր դասակարգի հաղթական, բայց ուժերի մեծ լարում պահանջող դեկտեմբերյան ընդհանուր գործադուլը։

3 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 153, ց. 1, գ. 653, թ. 205։

4 Տե՛ս նույն տեղում, թ. 162։

բարձուի օգնականի և երկու ոստիկանների վրա աշակերտները հոտած ձվեր նետեցին և ջարդեցին դասասենյակների ապակիները։ Աշակերտական շարժումների մեծ ծավալ ստանալու առթիվ Թիֆլիսի ոստիկանության պետի օգնական, փոխգնդապետ Պաստրյուլինը ոստիկանության դեպարտամենտին ուղարկած իր զեկուցագրում ընդգծում է. «... Ներկա դեպքի պատճառը, ընդհանուր առմամբ, հանդիսացել է քաղաքում ստեղծված արտակարգ վիճակը բանվորների ցույցը, հեղափոխական տարրերի պրոպագանդան, որը վաղուց թռուցիկների և բրոշյուրների ձևով ներ է թափանցել բոլոր ուսումնական հաստատությունները...»[5]։

Առաջին արական գիմնազիայի օրինակով դասերը դադարեցրին նաև մյուս գիմնազիաների և այլ ուսումնական հաստատությունների սովորողները։ Սովորող երիտասարդների հեղափոխական շարժման գործողության ուղեցույց հանդիսացավ ՌՍԴԲՊ կովկասյան միությունն Թիֆլիսի կոմիտեի հրապարակած «Մեր պահանջները» վերնագրով թռուցիկը, որտեղ շարադրված էին Թիֆլիսի միջնակարգ ուսումնական հաստատությունների սովորողների հետևյալ անհետաձգելի պահանջները.

1. Ընկերական կազմակերպությունների ստեղծման ազատություն։

2. Զրի ուսուցում։ 3. Վերացնել դպրոցի ղեկավարների և մանկավարժների միջամտությունը սովորողների անձնական կյանքին։ 4. Ընկերական դատարանների ստեղծման ազատություն։ 5. Ուսումնական հաստատություններ ընդունել բոլորին, առանց ազգության կամ կրոնական դավանանքի խտրության։ 6. Ուսումնական հաստատություններում մայրենի լեզվով դասավանդելու ազատություն։ 7. Դասավանդվող առարկաների թվից հանել կրոնի ուսուցումը։ 8. Քաղաքական հայացքների և կրոնական դավանանքների ազատություն։

«Հավատացած ենք, —ազդարարում էր աշակերտների անունից ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեն, — որ մեր այս պահանջները կարող են իրագործվել միայն նոր դեմոկրատական սկզբունքներով կառուցվող Ռուսաստանում։ Ուստի մենք միահամուռ կերպով միանում ենք ամբողջ Ռուսաստանի առաջավոր մարտիկների հերոսական կանչին՝ «Կորչի ինքնակալությունը», «Կեցցե դեմոկրատական հանրապետությունը»[6]։

Թռուցիկում նշվում էր նաև, որ քաղաքի միջնակարգ ուսումնական հաստատությունների սովորողները պաշտպանում են ռուսական պրոլետարիատի հեղափոխական շարժման ղեկավար՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությանը։ Այս թռուցիկը լայն տարածում գտավ Կովկասի սովորող երիտասարդության շրջանում։ Հունվարի 24-ին Քութաիսի գործադուլավոր բանվորները, քաղաքի ուսումնական հաստատությունների սովորողների հետ միասին, կազմակերպեցին հակապետական մեծ ցույց։ Մինչև երեկոյան ժամը 5-ը քաղաքի փողոցներում թնդում էին սովորող երիտասարդների հեղափոխական երգերը։ Քութաիսի բանվորների և սովորող երիտասարդների գործադուլների առթիվ ՌՍԴԲՊ Կենտրոնական կոմիտեի օրգան «Պրոլետարի» թերթը գրել է, որ գործադուլը տևեց մի ամբողջ շաբաթ. քաղաքում կյանքը կանգ էր առել, փակ էին բոլոր ուսումնական հաստատությունները, խանութները, դեղատները, արհեստանոցները։ Գործադուլը վերջացավ բանվորների հաղթա-

---

[5] Վրացական ՍՍՌ, ԿՊՊԱ, ֆոնդ, 153, ց. 1, գ. 653, թ. 158—159։

[6] Նույն տեղում, ֆ. 422, ց. 1, գ. 8797, թ. 23։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

նակով[7]։ Սովորող երիտասարդության մասնակցությունը բանվոր դասակարգի քաղաքական ցույցին կազմակերպել էր Քութաիսի ուսումնական հաստատությունների միացյալ աշակերտական կոմիտեն, որը մեկ օր առաջ ՌՍԴԲՊ-ի տեղական կոմիտեի ցուցումով հրավիրում է սովորող երիտասարդության ներկայացուցիչների խորհրդակցություն և որոշում հունվարի 24-ին կոչ անել բոլոր սովորողներին մասնակցելու բանվորական ցույցին։ Գործադուլային շարժումը տարածվեց նաև Քութաիսի նահանգի մյուս շրջաններում։ Քութաիսի գործադուլավորներին նահանգի քաղաքներից առաջինը իրենց համերաշխությունը հայտնեցին հունվարի 24-ին կարմիր դրոշներով ցույցի դուրս եկած Սամարեգիի քաղաքային ուսումնարանի սաները, որոնք «Կորչի ինքնակալությունը», «Կեցցե հավասարությունը և ազատությունը» բացականչություններով հավաքվեցին ուսումնարանի բակում։ Ցույցի ղեկավար աշակերտ Ապոլլոն Կիգուրաձեն ուսուցիչների ու աշակերտների հավանությամբ իջեցրեց Նիկոլայ երկրորդի մեծադիր նկարը և պատառոտեց։ Ցուցարար աշակերտները այդ ժամանակ ուսուցիչների հետ միասին երգում էին հեղափոխական երգեր[8]։

Նահանգական բարձրաստիճան չինովնիկները անհանգստացած էին ոչ միայն աշակերտական ցույցերից ու հուզումներից, այլ նաև այն բանից, որ ուսուցիչները մասնակցում, որոշ տեղերում էլ գլխավորում են այդ հուզումները։ «Վտանգավորն այն է, — գրում է Քութաիսի նահանգապետը, — որ ուսուցիչները ևս գտնվում են հանցագործ տարրերի ազդեցության տակ»[9]։

Սամտրեդիի աշակերտների քաղաքական ելույթին անմիջապես հաջորդեց Դիդի-Ջիխաիշի գյուղի սովորողների ցույցը, որը վերածվեց զինված ընդհարման։ Ցուցարար աշակերտները հունվարի 25-ի կիրակի օրը «Մարսելիեզ» երգելով շարժվեցին դեպի բազմամարդ շուկան։ Այդ ժամանակ դեպքի վայրը հասած կազակային ջոկատը (նախօրոք այդ մասին հայտնված էր նահանգապետին, որը և ուղարկել էր զինված կազակների ջոկատ) ցանկանում է բռնի ուժով ցրել աշակերտական ցույցը։ Ցուցարարները իրենց ուսուցիչների ղեկավարությամբ սկսում են դիմադրել կազակներին։ Շրջակա գյուղերից շուկա եկած գյուղացիները տեսնելով, թե ինչպես են կազակները մերկացած թրերով հալածում երեխաներին, իրենք էլ են միանում ցուցարարներին և գյուղից քշում կազակներին։ Հունվարի 27-ի իր զեկուցագրում Քութաիսի նահանգապետը այդ դեպքերի առթիվ փոխարքային հայտնում է՝ «...Զինվորների և գյուղացիների միջև եղած ընդհարման հետևանքով կան զոհեր»[10]։ Իսկ փետրվարի 12-ի զեկուցագրում նա ավելացնում է. «Խռովությունը նախապատրաստված է եղել հակապետական վտանգավոր հայացքներով վարակված անձանց կողմից, որոնք նպատակ են ունեցել խռովությանը մասնակից դարձնել Դիդի-Ջիխաիշի շուկա եկած շրջակա գյուղերի գյուղացիներին...»[11]։ Նույնիսկ պաշտոնական գրագրությունները չեն թաքցնում, որ հեղափոխական տրամադրությունները գյուղացիության շրջանում էլ մեծ տարածում են ստացել և գյուղական մասսան հիմնականում գնում է սոցիալ-դեմոկրատների լոզունգների ետևից։

---

7 Տե՛ս «Պրոլետարի», 1905, № 5։

8 Վրացական ՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 8756, թ. 60։

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում, գ. 8795, թ. 15։

11 Նույն տեղում, գ. 8756, թ. 61։

Անդրկովկասում բռնկված հեղափոխական շարժման ալիքները Բաքվում տարածվեցին որոշ ուշացումով։ Դրա պատճառը ցարիզմի կողմից հրահրված ազգամիջյան կոտորածներն էին։ Այնուամենայնիվ, այդ կոտորածները չկարողացան ջլատել Բաքվի պրոլետարիատին, որը ոտքի կանգնեց փետրվարի 14-ին՝ իր ետևից տանելով նաև սովորող երիտասարդությանը։ Դրա փայլուն օրինակներից են քաղաքի ուսումնական հաստատությունների սովորող երիտասարդության 1905 թ. փետրվարի 15-ի մասսայական դասադուլը և փողոցային ցույցերը։ Մինչև դասադուլի սկսվելը, փետրվարի 14-ին, ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի անմիջական ցուցումով աշակերտական կոմիտեն հրապարակեց «Բոլոր սովորողներին» թռուցիկը[12], որտեղ կոչ էր արվում սովորող երիտասարդությանը՝ դադարեցնել դասերը և միանալ բողոքի գործադուլի դուրս եկած Բաքվի պրոլետարիատին։

Թռուցիկը և բանվորական մասսաների բողոքի փոթորկահույզ ցույցերը քաղաքական պայքարի կոչեցին սովորող երիտասարդությանը։ ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի ցուցումով և ականավոր բոլշևիկ Մ. Ի. Վասիլև-Յուժինի ղեկավարությամբ առաջինը դասադուլ հայտարարեցին ռեալական ուսումնարանի աշակերտները, որոնց անմիջապես միացան քաղաքի մյուս ուսումնական հաստատությունների սովորողները։ Փետրվարի 15-ին առավոտից մինչև երեկո հազարավոր աշակերտներ հեղափոխական երգերով քայլում էին փողոցներով։ Ոստիկանական իշխանությունները, վախենալով քաղաքում տիրող հասարակական լարված մթնոլորտից (նոր էին դադարել հայ-ադրբեջանական կոտորածները), չէին համարձակվում բռնի ուժով ցրել աշակերտների ցույցը, որին մասնակցում էին նաև մեծ թվով ուսուցիչներ և ծնողներ։ Ցուցարարների մեջ այդ օրերին լայնորեն տարածվում էին ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի հրապարակած մարտական թռուցիկները։ Լենինյան «Վպերյոդ» թերթը իր № 15-ում Բաքվի աշակերտների այդ ցույցի մասին գրել է, որ ցարական կառավարության արյունոտ գործունեության դեմ ուղղված աշխատավորական մասսաների բողոքի ցույցերը քաղաքական և դաստիարակչական մեծ ազդեցություն են թողել սովորող երիտասարդության շարժումների վրա, որոնք անխզելի կերպով կապված են բանվորական շարժումների հետ։ Սովորող երիտասարդությունը, ստեղծված պայմաններից ելնելով, դուրս էր եկել ակադեմիական նեղ պահանջների սահմաններից և առաջ էր քաշում հասարակական նշանակություն ունեցող քաղաքական պահանջներ[13]։ Բաքվի աշակերտական կոմիտեն դասադուլի ընթացքում հաճախակի կազմակերպում էր մասսայական ժողովներ, զեկուցումներ, որտեղ մերկացնում էր ցարական կառավարության քաղաքականության հակաժողովրդական բնույթը։ Փետրվարի 18-ին Բաքվի աշակերտական կոմիտեն հրավիրեց գործադուլավոր սովորողների ներկայացուցիչների ժողով, որտեղ միահամուռ կերպով որոշվեց դասադուլը շարունակել միչև մարտի 1-ը։ Տեղական իշխանությունների ձեռնարկած միջոցառումները և սպառնալիքները չընկճեցին դասադուլավորներին։ Ուսումնական հաստատությունների ղեկավարները, վախենալով ստեղծված ծանր վիճակից, փորձեցին սիրաշահել դասադուլավոր աշակերտներին՝ հորդորելով, որ նրանք ներկայացնեն իրենց պա-

---

12 Ի դեպ, այդ թռուցիկը և ընդհանրապես Բաքվի աշակերտական կոմիտեի հրապարակած թռուցիկները տպագրվել են ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի տպարանում։

13 «Վպերյոդ», 1905, № 15։

հանջները, որոնք իբր թե կբավարարվեն։ Այդ ժամանակ սովորողները հայտարարեցին, որ իրենց պահանջը մեկ է՝ սահմանադիր ժողովի հրավիրում։ Մարտի մեկից աշակերտական կոմիտեի որոշմամբ դադարեցվեց դասադուլը, և քաղաքի բոլոր ուսումնական հաստատություններում սկսվեցին նորմալ պարապմունքները։ Այդ օրը ձեռքից ձեռք էր անցնում Վասիլև-Յուժինի ղեկավարությամբ աշակերտական կոմիտեի հրապարակած «Սովորողներին» թռուցիկը, որը Բաքվի սոցիալ-դեմոկրատական աշակերտական կազմակերպության մարտական ոգու փայլուն արտահայտություններից մեկն է։ Այդ թռուցիկը մի քաղաքական ազդ էր այն մասին, որ սովորող երիտասարդությունը չի դադարեցնի իր պայքարը ցարիզմի դեմ։ «Ընկերներ... մենք վերադառնում ենք գիմնազիա, որպեսզի ուսուցումը սկսվի։ Բայց եթե մեր կյանքը դնա նույն ուղիով, ապա մենք հանգիստ չենք մնա։ Մենք գործադուլ ենք արել մեր բողոքը հայտնելու կառավարության տմարդի քաղաքականության նկատմամբ, որը մեր աչքերի առջև մասսայական տեռորի, սպանությունների, ազգամիջյան կոտորածների քաղաքականություն է տանում Բաքվում, կամ անիմաստ կռիվ է մղում հեռավոր Արևելքում։ ...Ոչ՝ մենք չենք կարող վերադառնալ հանգիստ կյանքի, քանի չեն վերացել արդի անարդար կարգերը՝ սովի, աղքատության և սպանության իր քաղաքականությամբ։

Սովորողներ, եթե մենք միավորվենք և գործենք համաձայնեցված, կարող ենք ստիպել, որ հաշվի առնեն մեզ որպես ուժ»[14]։ Այնուհետև, թռուցիկը կոչ էր անում բոլոր ուսումնական հաստատությունների սովորողներին համախմբվել պրոլետարիատի կարմիր դրոշի ներքո և պատրաստ լինել գալիք հերոսամարտերին։ Ուսումնական հաստատություններում մեծ տարածում ստացած «Սովորողներին» թռուցիկի առթիվ Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին ուղարկած իր գաղտնի զեկուցագրում Բաքվի ռեալական ուսումնարանի դիրեկտորը հայտնում է, որ իրեն հասած հավաստի տվյալներով, քաղաքի սովորողների դասադուլները ղեկավարում էր Բաքվի կոմիտեի աչքի ընկնող գործիչ, ռեալական ուսումնարանի բնագիտության ուսուցիչ Վասիլև-Յուժինը։ Սկսած հալածանքների պայմաններում Վասիլև-Յուժինը անցնում է անլեգալ աշխատանքի։ Նա ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի առաջարկությամբ այդ օրերին հրապարակում է «Բոլոր սովորողներին» հանրահայտ նամակը, որը հետագայում ՌՍԴԲՊ կովկասյան միության կոմիտեն, Թիֆլիսի Հավլաբարի ընդհատակյա տպարանում արտատպեց երեք լեզուներով և տարածեց Անդրկովկասի շատ քաղաքներում ու շրջաններում։ Վասիլևի նամակը ավելի համախմբեց սովորող երիտասարդությանը գալիք փոթորիկների համար, դա միևնույն ժամանակ Բաքվի սովորող երիտասարդության հեղափոխական շարժումների բարձր գնահատումն էր ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի կողմից։ «Դուք կոահեցիք, — ասված էր նամակում, — և արձագանքեցիք եկող ամպրոպին ու փոթորիկին և ձեր երիտասարդ ձայնը միացրիք խիզախ մարտիկների հզոր կանչին։ Բոլոր ազնիվ քաղաքացիները իրենց համակրանքը արտահայտեցին ձեր նկատմամբ։ Դուք պետք է արդարացնեք այդ վստահությունը»[15]։

Նամակում երիտասարդությանը կոչ էր արվում կարդալ այնպիսի գրքեր, որտեղ նշվում է մարդկային երջանկության ճիշտ ճանապարհը, խորհուրդ էր

---

14 Վրացական ՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 8794, թ. 137։

15 Նույն տեղում, գ. 8798, թ. 116։

տրվում մշտապես կապի մեջ լինել ժողովրդի հետ. «Հաճախեցեք ժողովրդական ժողովներ և լսեցեք նրանց, դուք շատ բան կսովորեք»[16]։ Վասիլևի նամակի ազդեցությունը շատ մեծ էր աշակերտության շրջանում։ Այդ առթիվ Բաքվի աշակերտական կազմակերպության ղեկավարներից մեկը՝ Արտաշես Կարինյանը իր հիշողություններում պատմում է, որ Վասիլև-Յուժինի նամակի որոշ կտորներ մի բանի օր բոլոր աշակերտները կրկնում էին։ Վասիլև-Յուժինից հետո հեղափոխական աշխատանքը Բաքվի սովորող երիտասարդության շրջանում ոչ միայն չդադարեց, այլև ծավալվեց նոր ուժով։ Շատ ուսուցիչներ հետևելով Յուժինի և նրա հետ գործող Բրատկովսկու օրինակին, վստահորեն կանգնեցին աղատագրական պայքարի եկած մարտիկների շարքերում։ Այդ մասին է վկայում Բաքվի ժամանակավոր գեներալ-նահանգապետ իշխան Ամիլխորիի 1905 թ. ապրիլի 5-ի նամակը ուղղված Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին «...Պետք է հաղորդեմ ձեզ, որ բացի Վասիլևից և Բրատկովսկուց ուսուցիչների և ուսուցչուհիների մեջ կան ևս ուրիշ անձնավորություններ, որոնք բայքայիչ ազդեցություն են գործում սովորողների վրա։ Ինչ վերաբերում է Վասիլևին և Բրատկովսկուն, դեռևս չեն հայտնաբերվել... Պարզ է, որ նրանք թաքնված են Բաքվում և շարունակում են կործանիչ ազդեցություն գործել սովորողների վրա»[17]։

Հունվարի 9-ի դեպքերից հետո օրրստորե վտանգավոր բնույթ կրող մասսայական հեղափոխական շարժումների դեմ կառավարությունը ձեռնարկում է մի շարք միջոցառումներ։ Ներքին գործերի մինիստրության ոստիկանական դեպարտամենտի 1905 թ. հունվարի 26-ի № 1080 խիստ գաղտնի շրջաբերականում ընդգծվում է, որ արգելվում է միջնակարգ ուսումնական հաստատությունների աշակերտներին հաճախել դիմակահանդեսներ, ակումբներ և այնպիսի վայրեր, որտեղ աշակերտները կարող են ընկնել վտանգավոր գաղափարներով վարակված անձանց ազդեցության տակ։ Միաժամանակ ցուցում է տրվում ոստիկանությանը՝ կարիք զգալու դեպքում համագործակցել ուսումնական հաստատությունների ղեկավարների հետ՝ կանխելու երևան եկած աշակերտական հուզումները[18]։ Ակներև է, որ աշակերտական շարժումը հանդիսանալով պրոլետարական շարժման անբաժանելի մասը, խիստ ահաբեկել էր ցարական կառավարությանը, որը և ձեռնարկում էր բոլոր հնարավոր միջոցները սովորող երիտասարդությանը քաղաքական պայքարից հեռացնելու համար։ Միաժամանակ աշակերտական շարժման ծավալումից խուսափելու և սովորող երիտասարդությանը վախի և սարսափի տակ պահելու համար կառավարությունը անհրաժեշտ է դտնում, որպեսզի ոստիկանությունը ցանկացած ժամանակ միջամտի դպրոցների վարչական անձնակազմի գործունեությանը։ Կառավարության ձեռնարկած բոլոր միջոցառումները՝ մեկուսացնելու սովորող երիտասարդությանը հեղափոխական պայքարից, հաջողություն չէր կարող ունենալ, որովհետև նա իր արյունոտ քաղաքականությամբ մերկացրել էր իրեն և արժանացել ժողովրդական լայն մասսաների ատելությանը։

Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամրապնդման և ինտերնացիոնալ գաղափարների տարածման գործում նշանակալից ավանդ ներդրեց Անդրկովկասի սովորող երիտասարդությունը։ Բաքվի արյունոտ դեպքերի կա-

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում։

18 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 102, ց. 1, գ. 79, թ. 14։

պակցությամբ Շուշիի ռեալական ուսումնարանի աշակերտական սոցիալ-դեմոկրատական խումբը փետրվարի 11-ին հրապարակում է. «Պայքարիր հանուն քո իրավունքների համար» թռուցիկը, որը կոչ է անում բոլոր սովորողներին դուրս գալու մասսայական դասադուլի։ Սովորող երիտասարդության շարժումներից անհանգստացած Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուն Շուշի է ուղարկում տեսուչ Գ. Սլովինսկուն և պահանջում նրանից տեղական իշխանությունների օգնությամբ կարճ ժամկետում վերսկսել դադարեցված պարապմունքները։ Բայց աշակերտական դասադուլը վեր էր ածվում հակակառավարական մեծ ցույցի, որին ակտիվ մասնակցություն են ցույց տալիս նաև քաղաքի ազգաբնակչության դեմոկրատական խավերը։ Հոգաբարձության ներկայացուցիչը տեսնելով, որ ոչ մի կերպ հնարավոր չէ դադարեցնել այդ դասադուլը, որոշեց խնդրել հոգաբարձուին հարգելու տեղական իշխանությունների խնդիրքը մինչև սեպտեմբերի մեկը դադարեցնել Շուշիի ուսումնական հաստատությունների պարապմունքները։ «Հակառակ դեպքում,— հայտնում է Գ. Սլովինսկին, —աշակերտներն այնքան հաստատակամ են իրենց որոշման մեջ, որ մեր միջոցառումները կարող են հանգեցնել ծանր հետևանքների»[19]։ Կառավարությունը փակեց ևս մի շարք այլ ուսումնական հաստատություններ, բայց դրությունը չփոխվեց։ Ընդհակառակը, փակված ուսումնական հաստատությունների բարձր դասարանների աշակերտները ՌՍԴԲՊ տեղական կազմակերպությունների հանձնարարությամբ հակակառավարական ակտիվ ագիտացիա էին տանում ազգաբնակչության, առանձնապես սովորողների շրջանում, ամենուրեք կազմակերպում ինքնազարգացման խմբակներ, տարածում հեղափոխական թռուցիկներ։ Այդ առթիվ Երևանի նահանգի էջմիածնի գավառապետը հայտնում է, որ իրեն հասած տվյալներով, մի խումբ սովորող երիտասարդներ վտանգավոր տարրերի հանձնարարությամբ շրջում են գավառի ուսումնարան ունեցող գյուղերը և հակապետական մտքերով վարակում թե՛ սովորողներին, և թե՛ նրանց ծնողներին։ Գավառապետը հաճախակի կրկնվող աշակերտական հուզումների պատճառը համարում է «այդ վտանգավոր ազդեցության արդյունքը»[20]։

Եթե մինչև հունվարի 9-ի դեպքերը գավառային քաղաքների և գյուղերի սովորողների հուզումների վերացմանը ակտիվ աջակցություն էր ցույց տալիս ծնողների մեծ մասը, ապա հունվար-փետրվարյան արյունոտ դասերից հետո, ընդհակառակը, նրանք միանում էին իրենց զավակների ելույթներին և բացարձակ պաշտպանում նրանց պահանջները։

Սիգնախի արական և իգական ուսումնարանների միացյալ մանկավարժական խորհրդի նիստում դասադուլ հայտարարած աշակերտների ծնողներն ասել են «... Մենք թույլ չենք տա, որ մեր երեխաները հաճախեն ուսումնարան, քանի դեռ չի բավարարվել նրանց արդարացի պահանջները»[21]։

Իսկ նրանց պահանջներն էին.

1. Ուսուցումը պետք է տարվի մայրենի լեզվով, այն էլ պարտադիր լինի մինչև 16 տարեկան երկսեռ բոլոր քաղաքացիների համար։

2. Կրոնը պետք է հանել դասավանդվող առարկաների թվից։

---

19 Վրացական ՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 8800, թ. 32—33։

20 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 102, գ. 80, թ. 28։

21 Տե՛ս Վրացական ՍՍՌ. ԿՊՊԱ, ֆ. 427, ց. 2, գ. 47, թ. 9—10։

3. Զգնել ազդությունների ու կրոնական դավանանքի խտրություն։

4. Անհապաղ վերականգնել աշակերտական հուզումներին, դասադուլներին և ցույցերին ակտիվ մասնակցություն ցույց տալու համար ուսումնական հաստատություններից հեռացված աշակերտներին և այլն։

Վերոհիշյալ պահանջները Անդրկովկասի բոլոր ուսումնական հաստատությունների սովորողների համար միասնական էին, քանի որ դպրոցական հարցը մասնավոր բնույթ չէր կրում, այլ դարձել էր ինքնակալության լծի տակ տառապող ժողովուրդների այն հիմնական հարցերից մեկը, որը կարող էր լուծվել միայն պրոլետարական հեղափոխության հաղթանակի ճանապարհով։

Սովորող երիտասարդության դժգոհությունները քաղաքական պայքարի սուր բնույթով արտահայտվեցին նաև Երևանի նահանգում և Ղարսի մարզում։ Փետրվարի 22-ին ՌՍԴԲՊ Ալեքսանդրապոլի կազմակերպության ղեկավարությամբ տեղի ունեցան երկաթուղու և քաղաքի մյուս ձեռնարկությունների բանվորների գործադուլներ ու ցույցեր, որոնց ակտիվորեն մասնակցեցին նաև ուսումնական հաստատությունների սովորող երիտասարդները[22]։

Մարտի 24-ին ներկայացնելով իրենց պահանջները՝ դասադուլ հայտարարեցին Իգդիրի քաղաքային ուսումնարանի աշակերտները։ Այդ օրը սովորողները առաջին ժամից հետո, ինքնակամ թողնում են ուսումնարանը, հայտնելով, որ քանի չեն ավելացվի հայոց լեզվի դասավանդման ժամերը, իրենք չեն հաճախի դպրոց[23]։ Ուսումնարանի ղեկավարությունը, աշակերտների հրապարակային դժգոհություններից բխող ելույթները կանխելու նպատակով, հրավիրում է ծնողների և մանկավարժների միացյալ ժողով։ Սակայն, հակառակ ուսումնարանի դիրեկցիայի սպառնալիքներին, ծնողները պաշտպանում են աշակերտների պահանջները, և նշում որ երեխաները դասադուլ են հայտարարել իրենց դիտությամբ։ Հենց այդ ժողովում ծնողները միահամուռ որոշում են երեխաներին թույլատրել դպրոց հաճախելու միայն այն ժամանակ, երբ ուսումնարանի ղեկավարությունը հայոց լեզվի ժամերը շաբաթական 2-ից կդարձնի 6։ Աշակերտական հուզումները մարտի վերջերից սկսած լարված բնույթ են կրում նաև Երևանի ուսումնական հաստատություններում։ Նախ դասադուլ են հայտարարում քաղաքային պուշկինյան ուսումնարանի սովորողները, ապա այն ծավալվում է նաև արական և իգական գիմնազիաներում ու թեմական դպրոցում։

Դասադուլավոր աշակերտները ամենուրեք ներկայացնում են իրենց նախօրոք մշակած պահանջները, որոնք թեև հիմնականում ուսման պայմաններին էին վերաբերում, բայց և այնպես իրենց սուր ծայրով ուղղված էին տիրող սոցիալական կարգերի դեմ։

Այսպիսով, 1905 թ. հունվարի 9-ի դեպքերի արձագանքները վկայում են, որ ռուսական առաջին հեղափոխությունը ծավալվում էր լայնությամբ ու խորությամբ և ընդգրկում ժողովրդական լայն մասսաներին։

Հեղափոխության վճռական ուժերի՝ բանվորների և գյուղացիների հետ միասին ինքնակալության տապալման համար պայքարի էր ելել նաև սովորող երիտասարդությունը։

---

22 Տե՛ս «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» հոդվածների ժողովածու, Երևան, 1955, էջ 119։

23 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 159, թ. 4։

Հեղափոխական շարժումները հետագայում ավելի ծավալվեցին և 1905 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, ցնցեցին ցարական կառավարության հիմքերը։

Այդ հերոսական պայքարի օրերին էր, որ Վ. Ի. Լենինը մարգարեաբար կանխատեսելով պրոլետարական հեղափոխության մեջ սովորող երիտասարդության դերը, պարտիական կազմակերպություններին կոչ էր անում. «Գնացեք երիտասարդության մոտ։ Իսկույն հիմնեցեք մարտական ջոկատներ ամենուրեք և ամեն տեղ՝ թե՛ ուսանողների մոտ, թե՛ հատկապես բանվորների մոտ»[24]։

Ш. Б. Оганджанян

ОТКЛИКИ УЧАЩЕЙСЯ МОЛОДЕЖИ ЗАКАВКАЗЬЯ НА СОБЫТИЯ 9 ЯНВАРЯ 1905 г.

Резюме

На основе архивных материалов автор осветил революционное движение учащейся молодежи средних учебных заведений Закавказья за период январь—март 1905 года.

Все массовые революционные выступления учащихся Закавказья проходили в тесной взаимосвязи с революционным движением студентов высших и средних учебных заведений России. Борьба учащейся молодежи против самодержавия являлась частью общепролетарского дела. Эта борьба носила многосторонний характер: начиная с ученических требований вплоть до революционных схваток против царских войск и полиции.

По указанию Тбилисского ученического комитета РСДРП в январе 1905 года учащиеся средних учебных заведений Тбилиси, Кутаиси, Батуми присоединились к стачечникам-рабочим и выступили с политическими требованиями.

Несколько позднее поднялась волна ученических демонстраций в г. Баку. Здесь молодежь боролась как против самодержавных порядков, так и против межнациональной резни, организованной представителями царских властей с целью отвлечь трудящихся от революционной борьбы.

Борьба учащейся молодежи неразрывно была связана с освободительным движением российского пролетариата. В крупных городах (Баку, Тбилиси, Александрополь) ученические организации являлись ячейками Кавказского союзного комитета РСДРП.

Их деятельностью руководили социал-демократические организации. В этой борьбе выковывалось мужество молодых борцов, которые в дальнейшем приняли активное участие в революционной борьбе.

---

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 438։